Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2/734
268

1925
352(47928)
С-11

Ա. Ս. Խ. Հ.

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Proletarներ բոլոր յերկրների, միացե՛ք։

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՅՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

352(47.924)
Ա-11

Հրատարակություն ԱՍԽՀ Ներքժողկոմատի
Բաքու 1925 թ.

2010

352(97-924)
Ա-11

Ա. Ս. Խ. Հ.

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Proletarներ բոլոր յերկրների, միացե՛ք։

300
Ջ698-ՀՐ

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հրատարակություն ԱՍԽՀ Ներքժողկոմատի
Բագու 1925 թ.

30327-ԿՀ

ՕՕԵ
ԳԴ-ՔԵԱՔ

2001
12973-58

Азлит № 1545. 2-я Гостип. Азполиграфтреста ВСНХ. Зак. № 8370 Тир. 1500 экз.

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

I.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Գյուղխորհուրդների մասին յեղած կանոնադրությունների համաձայն, գյուղխորհուրդների պարտականությունն է—

ա) քաղաքացիական դրության յերեք տեսակի ակտերի— ծննդյան, մահվան և ամուսնության գրանցումն վարելը,

բ) ծնունդների, մահվան և ամուսնությունների ակտային գրքեր պահելը,

գ) ծնունդների, մահվան և ամուսնությունների գրանցման գրքերից տեղեկություններ և վկայված քաղվածքներ տալը,

դ) № 4 ձևով ամեն ամիս թվական հաշվետվություն ներկայացնել համապատասխան շրջգործկոմին՝ տվյալ գյուղխորհրդի սահմաններում ծնունդների, մահվան և ամուսնությունների ցուցակագրած ակտերի քանակի մասին։

Ծանոթություն.—Հիշյալ ակտերի գրանցումները (ցուցակագրումը) իրավական ուժ ունեցող հիմնական գրանցումներ են։

2. Ծնունդների, մահվան և ամուսնությունների ակտերի ցուցակագրումը կատարում է գյուղխորհրդի նախագահը կամ քարտուղարը, վորոնք գրանցումները ճշտորեն և խնկությամբ տանելու համար պատասխանատվություն են կրում։

3. Գյուղխորհուրդները պարտավոր են, ձեռքի տակ ունենալով

իրենց շրջանի բնակված տեղերի ցուցակները, հայտարարել քաղաքացիներին տվյալ գյուղխորհրդում ծնունդները, մահվան դեպքերը և ամուսնությունները ցուցակագրելու պարտականության մասին, ցույց տալով հայտարարություններ ընդունելու ժամանակը։

4. Քաղաքացիական դրության ակտերի ցուցակագրության վրա ընդհանուր հսկողությունը և ղեկավարությունը հանձնարարվում է համապատասխան շրջգործկոմներին։

5. Քաղաքացիական դրության ակտերի գրանցման գրքերը տեխնիկորեն տանելը հրահանգում և հսկում են Շրջանային Զագսերի գործավարները, վորոնք պարտավոր են տարին 2 անգամից վոչ պակաս հետախուզել յուրաքանչյուր գյուղական Զագս։

II.

ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐՔԵՐԸ ՅԵՎ ԳՈՒԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Գյուղխորհուրդները վարում են հետեվյալ գրքերը.— ա) ծնունդների գրանցման գիրքը, բ) մահվան դեպքերի գրանցման գիրքը և գ) ամուսնությունների գրանցման գիրքը։

Ծանոթություն.—Գավգործկոմների Ներքին Վարչության Բաժինները պարտավոր են (համապատասխան Շրջգործկոմների միջոցով) գյուղխորհրդներին մատակարարել ծնունդների, մահվան դեպքերի և ամուսնությունների գրանցման համար վորոշված ձեվի գրքեր։

7. Վերոհիշյալ գրքերը տարվում են յերկու որինակ—իսկական և պատճեն։ Գրքերի մի որինակը (իսկականը) տարին վերջանալուն պես, նոր տարվա հունվարի 15-ից վոչ ուշ, ուղարկվում է Ներքգործժողկոմատի կից Կենտրոնական Զագսը մշտական պահպանման համար (Գավգործկոմների միջոցով), իսկ մյուսը (պատճենը) մնում է Գյուղխորհրդի արխիվում։

8. Յուրաքանչյուր գիրք այբուբենական կարգով է տարվում։

9. Յուրաքանչյուր ակտ, վոր մտցրվում է ցուցակագրման գրքի մեջ, պիտի ստորագրված լինի Գյուղխորհրդի նախագահի և քարտուղարի ու հայտարարություն տվող անձնավորության կողմից, տվյալ գրանցումը կատարելուց անմիջապես հետո։

10. Քաղաքացիական դրության ակտերի գրանցման գրքերում կրճատումներ և ջնջումներ ու տեղը նորից գրել չի թույլատրվում։

11. Ուղղումները թույլ են տրվում պայմանով, վորպեսզի գրանցման մեջ մասնակցող անձնավորությունների ստորագրություններից առաջ գրանցման վերջը բացատրական լինի։ Ուղղումները արվում են այնպես, վոր սխալ կամ ավելորդ գրվածները ջնջվեն բարակ գծով, իսկ վերեվում գրվի ուղղումը։

12. Քաղաքացիական դրության յուրաքանչյուր ակտը համապատասխան ակտի և գրքի մեջ է մտցրվում՝ համարով։ Ակտի յուրաքանչյուր տեսակի համարագրությունը պիտի մեկը լինի և անընդհատ։

13. Յուրաքանչյուր գրանցում, վոր մտցրվում է քաղաքացիական դրության ակտերի գրանցման գրքի մեջ, մինչեվ ստորագրելը, պաշտոնակատար անձը պիտի կարդա հայտարարություն տվողին։

14. Ծնունդների, մահվան դեպքերի և ամուսնությունների գրանցման գրքերից բացի Գյուղխորհուրդները տանում են նայեվ հետեվյալ գործերը.—

ա) ի գիտություն և ի ղեկավարություն (այդ գործերի մեջ կարվում են քաղաքացիական դրության ակտերի գրանցման բարձրագույն որգանների բոլոր կարգադրությունները).

բ) ամսական հաշվետվություն—ստատիստիկա և ընդհանուր գրագրություն (այդ գործի մեջ կարվում են բոլոր տրվող հաշվետու տեղեկությունների պատճենները).

գ) ակտերի փաստորեն ցուցակագրումը (այդ գործի մեջ կարվում են ծնունդների և մահվան դեպքերի գրանցման ժամանակ պահանջվող բոլոր փաստաթղթերը).

դ) ամուսնությունների ցուցակագրություն (այդ գործի մեջ կարվում են ամուսնությունների գրանցման ժամանակ պահանջվող բոլոր փաստաթղթերը)։

15. Ծնունդի, մահվան և ամուսնության մասին գրանցման հետ միաժամանակ լրացվում են—ակտային գրքերին վերաբերող ստատիստիքական քարտեր, վորոնք ամսեկան (թվական) հաշվետվության հետ միասին ուղարկվում են համապատասխան Շրջգործկոմներին, վորպեսզի վերջիններս հանձնեն Գավառական Զագսերին։

Ծանոթություն.—Ստատիստիքական քարտերի քանակը պիտի համապատասխանի ամսեկան հաշվետվության մեջ ցույց տրված ցուցակագրված ակտերի քանակին։

III.

ԾՆՈՒՆԴՆԵՐԻ ԱԿՏԵՐԻ ՑՈՒՅԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

16. Ծնունդների գրանցումների գրքի մեջ մտցրվում են ծնունդյան և թողնված յերեխաներ գտնելու դեպքերը։

17. Ծննդյան մասին հայտարարությունը պիտ տրվի ծնված որվանից սկսած յերկու շաբաթվանից վոչ ուշ։

Ծանոթություն 1.—Գյուղխորհուրդները պիտի հետեվեն, վորպեսզի ծնունդները ցուցակագրելու մասին հայտարարությունները ժամանակին տրվեն։ Ցուցակագրման ժամանակը առանց հարգելի պատճառների բաց թողնելու յուրաքանչյուր դեպքի մասին արձանագրություն է կազմվում և ուղարկվում համապատասխան Դայրագործկոմը, ժողդատարանին ուղարկելու, մեղավորների դեմ քրեական որենսգրքի 96-րդ հոդվածի համաձայն քրեական հետախուզություն սկսելու համար։

Ծանոթություն 2-րդ.—Հարգելի պատճառներ են համարվում.—ա) ազատությունից զրկվելը, բ) հաղորդակցության դադարումը՝ գետերի վարարման, վարակիչ հիվանդությունների և այլ դեպքերի պատճառով, գ) հիվանդությունը, վոր խանգարում է տնից դուրս գալ, դ) ծնողներից մեկի մահը կամ մոտ ազգականների ծանր հիվանդությունը։

18. Մանկան ծննդյան մասին հայտարարություն տրվում է բանավոր կամ գրավոր՝ ծնողների կամ նրանցից մեկի, իսկ ծնողների հիվանդության, մահվան կամ բացակայության դեպքում—ազգականների կողմից, վորոնց խնամակալության տակ է գտնվում մանուկը։

19. Յերկվորյակ ծնվելու դեպքում, նրանցից յուրաքանչյուրի ծննդյան մասին պիտի հատուկ հայտարարություն տրվի, իսկ ծնունդների գրքում պիտի արվի յերկու առանձին գրանցում։

20. Ծննդյան մասին պիտի հայտարարություն տրվի նաև մանուկը մեռած ծնվելու դեպքում, վորի մասին ծնունդների գրանցման գրքում համապատասխան ծանոթություն է մտցրվում։

Ծանոթություն.—Մեռած ծնվածների մասին գրանցումը ծնունդների գրանցման գրքերի մեջ մտցնելու հետ միաժամանակ, մտցրվում է նաև մահվան դեպքերի գրանցման գրքի մեջ։

21. Մանուկ գտնելու մասին հայտարարությունը պիտի արվի գտնողի կողմից։ Մանուկը գտնելու մասին հայտարարությանը պիտի կցված լինի նաև տեղական վարչական իշխանության կողմից կազմած և հաստատած արձանագրությունը։ Արձանագրության մեջ պիտի ցույց տրվեն մանուկը գտնելու ժամանակը, տեղը և հանգամանքը, նրա սեռը, հատուկ մարմնական նշանները, յեթե այդպիսիք կան, յենթադրյալ հասակը, մանկան հետ գտնված իրերը և փաստաթղթերը, վերջինների բովանդակությունը բառացի տալով։ Արձանագրության մեջ պիտի ցույց տրվի, թե մանուկը ինչ հիմարկության կամ անհատի ե հանձնվում և կամ պիտի հանձնվի։

22. Մանկանը անուն են տալիս ծնողները կամ նրանց փոխարինողները։ Յուրաքանչյուր նորածին մանկան կարելի ե ցանկացած անունը տալ, թեկուզ այդ անունը ջոկված լինի կենցաղային անունների շարքից։

23. Ծննդյան մասին գրանցումը գրքի մեջ մտցրվում ե հետևյալ կարգով.—

ա) առանձին ցուցակում գրվում ե ընդհանուր կարգային համարը ըստ գրանցման թվի.

բ) մյուս յերկու սյունյակներում դրվում ե կարգային համարը ըստ արական կամ իգական սեռի ծնունդների թվի.

գ) յերկրորդ սյունյակում—գրանցման ամիսը և որը.

դ) յերրորդ սյունյակում—սեռը, արական կամ իգական.

յե) չորրորդ սյունյակում գրվում ե մանկան անունը և ազգանունը։ Յեթե մանուկը ծնվել ե ցուցակագրված ամուսնությունից, այն ժամանակ տրվում ե ամուսնական ազգանունը, այսինքն այն ազգանունը, վորով ցուցակագրվել ե տվյալ ծնողների ամուսնությունը։ Իսկ յեթե մանուկը ծնվել ե չցուցակագրված ամուսնությունից, այն ժամանակ մանուկը կարող ե կրել հոր կամ մոր ազգանունը և կամ ել միացյալ, այսինքն՝ կրկնակի ազգանուն։

Ընդհանրապես չցուցակագրված ամուսնությունից ծնված մանուկներին ազգանուն տրվում ե ծնողների համաձայնությամբ։

Գտնված յերեխաներին ազգանուն տրվում ե կամ գտնողների ցանկությամբ, վորոնք իրենց վրա են վերցրել մանկան դաստիարակությունը, կամ ել ցուցակագրությունը վարող հիմնարկության—այսինքն Զագսի որգաններն են վորոշում։

զ) հինգերորդ սյունյակում.—ծննդյան, որն ու տարին.

ե) վեցերորդ սյունյակում—ծնողների անունները և ազգանունները.

զ) յոթերորդ սյունյակում—ծնողների տարիքը (ծննդյան որը, ամիսն ու տարին).

թ) ութերորդ սյունյակում պիտի ցույց տրվի ծնողների մշտական բնակության տեղը, այսինքն նահանգը, գավառը, շրջանը և գյուղը.

ժ) իններորդ սյունյակում—ծնողների զբաղմունքը.

ժա) տասներորդ սյունյակում—տվյալ ծնողների քանիերորդ յերեխան է ըստ ծնվածների և կենդանի մնացածների թվի.

ժբ) տասնմեկերորդ սյունյակում—ով է մանկան ծննդյան մասին հայտարարությունն տալիս։

IV.

ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱԿՏԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

24. Մահվան գրանցման գրքի մեջ են մտցրվում մահվան դեպքերը, դիակներ գտնելը և վորևե անձնավորությունը դատական հիմնարկությունների կողմից մեռած հայտարարելը։

Ծանոթություն.—Դատարանի կողմից մեռած ճանաչվածների գրանցումը կատարվում է ժողդատարանից տվյալ անձնավորության մեռած ճանաչվելու մասին համապատասխան վորոշում ստանալուց հետո։

25. Մահվան մասին հայտարարությունը տրվում է բանավոր կամ գրավոր, մահվան որվանից յերեք որից վոչ ուշ։

Ծանոթություն.—Մահվան ցուցակագրության ժամանակը անցկացնելու դեպքում հարկավոր է ղեկավարվել տվյալ հրահանգի 17-րդ կետի ծանոթություններով։

26. Մահվան մասին հայտարարությունը պիտի տրվի մեռածի հետ ապրած ազգականների կամ տնացիների, իսկ յեթե այդպիսիք չկան—հարևանների կամ այն հիմնարկությունների կողմից (հիվանդանոց կամ մանկատուն), ուր մահը տեղի է ունեցել, կամ դիակը գտնողների կողմից։

27. Մահվան մասին հայտարարության մեջ ցույց է տրվում—մեռածի անունը, ազգանունը, ծննդյան թիվը, վերջին բնակատեղին, նրա ընտանեկան դրությունը, մահվան տարին, ամիսը և

որը, մահվան պատճառը և մահվան մասին հայտնող անձնավորության անունը, ազգանունը և բնակատեղին։

Ծանոթություն.—Մահվան մասին բժշկական վկայական ներկայացնելը պարտադիր չէ, բայց ցանկալի է։

28. Դիակը գտնելու մասին հայտարարությանը պիտի կցված լինեն—ա) մահվան մասին բժշկական վկայական, բ) տեղական վարչական իշխանության կազմած արձանագրությունը, ուր մանրամասն ցույց են տրված դիակը գտնելու պարագաները։

29։ Մահվան գրանցման ժամանակ մեռածի անձը վկայող փաստաթղթերը, յեթե այդպիսիք տրված են մի մարդու համար, վերցրվում են և վոչնչացման մասին գրանց վրա համապատասխան նշաններ արվում։

Մի ամիս անցնելուց հետո հիշյալ վկայականները ուղարկվում են այն հիմնարկներին, վորոնք տվել են, վոչնչացնելու համար։

Ծանոթություն.—Յեթե անձը վկայող փաստաթուղթը մի մարդու համար չի տրված, այն դեպքում դրա վրա միայն մահվան մասին է ծանոթություն մտցրվում, իսկ փաստաթուղթը վերադարձվում է այն անձնավորություններին, վորոնք մտցրված են նրա մեջ։

30. Մահվան դեպքի գրանցման ժամանակ համապատասխան ծանոթություններ են արվում ծննդյան գրքում, իսկ այդ ծանոթությունների պատճենները ուղարկվում Ներքգործժողկոմատի կից Կենտրոնական Զաղսին, վորտեղ պահվում են ցուցակագրության գրքերի յերկրորդ որինակները։

Ծանոթություն.—Յեթե անձնավորության մահը տեղի է ունեցել վոչ այն տեղում, ուր կատարվել է ծննդյան մասին գրանցումը, այն ժամանակ Գյուղխորհուրդը պիտի մահվան մասին ծանուցում ուղարկի (մահվան մասին գրանցումը կատարելուց հետո) այն տեղական Զաղսին, ուր պահվում է նրա ծննդյան մասին գրանցումը, կամ ըստ վերջին բնակության տեղի։

31. Մահվան ակտերի գրանցումը կազմելու կարգը նույնն է, ինչ վոր ծննդյան գրանցման կարգը։

V.

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ Գ՛ԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

32. Ամուսնանալ ցանկացողները իրենց բնակության տեղի համաձայն գրավոր հայտարարություն են տալիս տեղական Զաղսին (տես ձևը)։

33. Հայտարարություններ չեն ընդունվում.—

ա) 18 տարեկանից ցածր արական սեռի և 16 տարեկանից ցածր՝ իգական սեռի անձնավորություններից։

բ) ուղղակի յելնող և իջնող գծի համաձայն ազգականներից, լրիվ ազգակցական և վոչ լրիվ ազգակցական յեղբայրներից և քույրերից, ըստ վորում ազգակցության կապի գոյությունը ընդունվում է որինական կարգով ամուսնացածների և նրանց ժառանգների միջև։

Ծանոթություն 1-ին.—Լրիվ ազգակցական յեղբայրներ համարվում են նրանք, վորոնց հայրը և մայրը ընդհանուր են. իսկ յեթե նրանց հայրը ընդհանուր է, իսկ մայրերը տարբեր, կամ ընդհակառակը, այն դեպքում այդպիսի յեղբայրները և քույրերը համարվում են վոչ լրիվ ազգակցական։

Ծանոթություն 2-րդ.—Ամուսնանալ չեն կարող ուղղակի յելնող գծերի ազգականները,—տղամարդը չի կարող ամուսնանալ իր տատի, մոր, քրոջ, աղջկա և թոռան հետ, կինը չի կարող ամուսնանալ իր պապի, հոր, յեղբոր, վորդու և թոռան հետ։

գ) ամուսնական դրության մեջ գտնվողներից,

դ) խելագարվածներից,

յե) սուր-վարակիչ, կպչող (прилипчивый) հիվանդություններով հյուծվողներից։

34. Ամուսնանալ ցանկացողները ստորագրություն են տալիս նախորդ կետում թված ամուսնության համար խոչընդոտների բացակայության մասին, նույնպես և ստորագրություն, վոր իրանք ամուսնանում են կամավոր կերպով և իրենց առողջության մասին բժշկական վկայական են ներկայացնում։

Ծանոթություն.—Այն վայրերում, ուր կանանց համար բժիշկներ չկան, ամուսնացող կանայք ազատվում են իրենց առողջության դրության մասին բժշկական վկայական ներկայացնելուց։

35. Քաղաքացիական ամուսնության որենքը ամուսնացողների համար վորոշում է ամենացածր տարիքի չափը, իսկ բարձր տարիքը վոչ մի բանով չի սահմանափակում։

36. Ամուսնացողների համար տարբեր կրոնների պատկանելությունը և հոգևոր կոչում ունենալը վոչ մի խոչընդոտ չի կարող հանդիսանալ։

37. Ամուսնացողների տարիքը պիտի հաստատվի ծննդյան գրքերից տեղեկություններ ներկայացնելու միջոցով։ Այն դեպքերում, յերբ ամուսնացողները չեն կարող նման տեղեկություններ ներկայացնել հետևյալ պատճառների հետևանքներով—ա) յեթե վորևե մի բացառիկ պատճառով (այրվել կամ վոչնչացվել են) արխիվում ծննդյան գրքեր չկան, բ) յեթե այն գրքում, ուր պիտի գրված լինի ծննդյան դեպքը, չի գտնվի համապատասխան գրություն, վոր հաճախ լինում է թուրքերի մոտ, քանի վոր առաջ վերջինների մեջ ծնվածների պարտադիր ցուցակագրություն չի յեղել կամ գ) յեթե ամուսնացողները ցուցակագրված են արտասահմանում և այլն,—այդպիսի դեպքերում ամուսնացողների տարիքը վորոշվում է արտաքին տեսքով Հատուկ հանձնաժողովի կողմից, բաղկացած Գյուղխորհրդի նախագահից և քարտուղարից ու կանանց կազմակերպության (կինբաժնի) ներկայացուցչից. այն գյուղերում, ուր բժիշկ կամ բուժակ (ֆելդշեր) կա, վերջինները անպատճառ մտցրվում են այդ հանձնաժողովի կազմի մեջ։

38. Ամուսնացողների անձնավորությունը և նրանց ընտանեկան դրությունը կարող է հաստատվել անցագրով, վկայականներով և այլ փաստաթղթերով, նույնպես և վկաների ցուցմունքներով ու բոլոր այլ տեսակի միջոցներով, վորոնք Զագսի վարիչի կողմից կարող են բավարար համարվել։

39. Նրանք, ովքեր կմեղադրվեն նախամտածված կեղծ ցուցմունքներ տալու մեջ, թե ամուսնանալու համար արգելքների հանգամանքները բացակայում են, պատասխանատվության են յենթարկվում քրեական որենսգրքի 96-րդ հոդվածով՝ վորպես ամուսնությունը խանգարող հանգամանքները թաքցնող ու սուտ տեղեկություններ տվող, իսկ ամուսնությունը համարվում է անվավեր։

40, Ամուսնանալուց ամուսնացողները հարցաքննվում են, թե ինչ ազգանուն են ցանկանում ունենալ—մարդու թե կնոջ ազգանունը, կամ թե նրանց միացյալ ազգանունները և համաձայն նրանց հայտարարության, ամուսնությունը ցուցակագրվում է ամուսնությունների գրանցման գրքի մեջ։

41. «Ընտանեկան կացություն» աղյուսակում պետք է նշանակվի՝ ամուրի, այրի, բաժանված։

42. Բնակչության վարի աղյուսակում նշանակվում է մշտական ապրելու տեղը։

43. 8-րդ աղյուսակում անհրաժեշտ է նշանակել, թե ամուսնացողներից յուրաքանչյուրը քանիերորդ անգամն է ամուսնանում։

44. Հատուկ ծանոթության մեջ մատնանշվում են բաժանված յերեխաները, վորոնք գտնվում են ամուսնացողներից յուրաքանչյուրի մոտ։

45. Ամուսնությունների գրանցումը անհրաժեշտ է կատարել նախորոք տրված հայտարարությունների կարգով։

46. Ամուսնությունները կատարվում են դռնբաց, Զագսի (քաղաքացիական ակտերի ցուցակագրման) շենքում։

47. Բացառիկ դեպքերում, Կենտրոնական Զագսի թույլտվությամբ ամուսնության ցուցակագրումը կարող է կատարվել Զագսի շենքից դուրս, վորի համար պետք է կազմել հատուկ արձանագրություն։

48. Յուրաքանչյուր մի քաղաքացի (կին թե տղամարդ) իրավունք ունի իրա կյանքի ընթացքում անսահմանափակ թվով ամուսնություններ կնքելու։

49. Ի հաստատումն կայացած ամուսնության, ամուսնացողներին առանց հապաղման տրվում է քաղվածք նրանց ամուսնության մասին։

50. Կարմիր բանակայինների ամուսնությունները ցուցակագրելուց անհրաժեշտ է զինվորական մասերին հայտնել—կարմիր զինվորի անձնական վկայականում հիշված հասցեով արձանագրված ամուսնության մասին, ճիշտ նշանակելով, ում հետ է ամուսնացել զինվորը, յերբ և վորտեղ։

51. Ամուսնացողներին տրված վկայագրերի վրա դրվում է շտամպ—այս ինչ թվին, ամսին, որին, այսինչ Զագսը ցուցակագրել է (այսինչի) ամուսնությունը (այսինչի հետ), ամուսինները անվանվում են (այս ինչ) ազգանունով։ Այն անձնավորության վկայագրում, վորը ամուսնության հետևանքով փոխել է ազգանունը, հինը ջնջվում է բարակ գծով, վերևից գրվում է նորը, իսկ ուղղվածը մակագրվում է հենվելով վերև մատնանշված շտամպի վրա. նույն կարգով հատապատասխան կերպով ուղղվում է յերկու ամուսինների վկայագրերի ընտանեկան ադյուսակի գրածը։

52. Ծնողների զանազան հպատակության դեպքում, յեթե կողմերից մեկը Խորհրդային հպատակ է, յերեխաների հպատակությունը վորոշվում է ծնողների նախորոք համաձայնությամբ, վորի մասին հայտնվում է Զագսին ամուսնանալուց։

Ծանոթություն — Ծնողների մեջ տվյալ հարցի նկատմամբ համաձայնություն չկայանալու դեպքում, յերեխաները համարվում են ՍԽՀՄ հպատակներ այն պայմանով,

վոր իրավասու դառնալու դեպքում նրանց իրավունք է տրվում ցանկություն հայտնել թե ծնողներից վորի հպատակությունն են ցանկանում ընդունել։

53. Ծնողները կարող են համաձայնության գալ, 14 տարեկանը չլրացած յերեխաների նկատմամբ, այս կամ այն դավանությանը պատկանելու մասին։

54. Յեթե ծնողները տվյալ հարցի նկատմամբ համաձայնության չեն գալիս, այն դեպքում յերեխաները 14 տարեկան դառնալուց համարվում են դավանանքից դուրս։

Ծանոթություն. Ծնողների հիշյալ համաձայնությունը յերեխաների այս կամ այն դավանանքին պատկանալու մասին պետք է կնքվի գրավոր ձևով։

55. Համաձայն ԱՍԽՀ Քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի զանազան հպատակություն ունեցող քաղաքացիների ամուսնանալու մասին չի հետևվում վոր կինը պետք է ընդունի ամուսնու հպատակությունը։

56. Կին քաղաքացին, վորը ցանկանում է ընդունել իր ամուսնու հպատակությունը, այդ մասին պետք է հայտնի ամուսնանալու ժամանակ, վորտեղ այդ հայտարարությունը մտցրվում է ամուսնական ակտերի գրքի մեջ։

Ծանոթություն.—Ամուսնանալուց հիշյալ հայտարարությունը չանելու դեպքում, ընդունվում է նախ քան ամուսնությունը հիշած հպատակությունը և հետագայում ամուսնու հպատակությունը ընդունելու հարցը վճռվում է ընդհանուր կարգով։

VI.

ԳՐՔԵՐԻՑ ԾՆՆԴՅԱՆ, ՄԱՀՎԱՆ ՅԵՎ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԸ ԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱՏՈՒՐՔ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I.

1. Ծնունդների, մահերի և ամուսնությունների ակտերի ցուցակագրումը կատարվում է ձրի։

2. Բոլոր տեղեկություններն ու քաղվածքները ինչպես հին չափաբերական, նույնպես և նոր ցուցակագրության գրքերից, պետք է վճարվեն հասարակ նշանատուրքով հետևյալ չափով.

ա) Ծնունդների ու մահացությունների գրքերից առաջին

անգամ տրված տեղեկությունների և քաղվածքների համար վճարվում է տասն և հինգ կոպ. (15 կ.) նշանատուրքով։

Ծանոթություն.—Ծնունդները և մահացությունները ցուցակագրելուց անհրաժեշտ է նշանակել առաջին քաղվածքը տրված լինելու մասին։

բ) Ամուսնությունների ցուցակագրման գրքերից տրված առաջին քաղվածքները յենթարկվում են մի ռուբլու (1 ռ.) նշանատուրքի։

գ) Ծննդի, մահացության և ամուսնության համար տրված բոլոր յերկրորդ քաղվածքները, վորոնք կտրվեն ինչպես հին չափաբերական, նույնպես և նոր ցուցակագրման գրքերից, յենթարկվում են մի ռուբլու (1 ռ.) նշանատուրքի։

2.

Նշանատուրքից ազատվում են այն բոլոր տեղեկություններն ու քաղվածքները, (ինչպես հին չափաբերական, նույնպես և նոր ցուցակագրության գրքերից), վորոնք տրվում են համաձայն հետևյալ պահանջների.—

1. Կառավարական հիմնարկների և պաշտոնական անձանց կողմից կառավարական նպատակների համար.

2. Կոմունիստական կուսակցության և Կոմունիստական Յերիտասարդական Միության կազմակերպությունների կողմից.

3. Ադրբեջանի Արհեստմիությունների Խորհրդի և նրա մասեր կազմող միությունների կողմից.

4. գիտական և կուլտուր-լուսավորական հիմնարկների և կազմակերպությունների կողմից.

5. արդյունաբերական տուրքից ազատ պետական (ի Թիվս վորոնց և կոմունալ) ձեռնարկների կողմից.

6. պաշտոնապես ցուցակագրված և հաստատված բարեգործական բնույթ կրող հիմնարկների կողմից.

7. բոլոր քաղվածքներն ու տեղեկությունները, վոր տրվում են սոցիալական ապահովության յենթակա և սոցիալական ապահովագրության գումարներից նպաստ ստացող գործազուրկ անձնավորությունների խնդրանք.

8. բոլոր այն քաղվածքներն ու տեղեկությունները, վոր տրվում են քաղաքացիներին՝ դպրոցներին ներկայացնելու և միլիցիայի որգաններից անձնավկայագիր ստանալու համար։

Ծանոթություն. 8-րդ կետում մատնանշված քաղվածքը տալուց անհրաժեշտ է մակագրել, վոր քաղվածքը

տրվում է բացառապես դպրոցին կամ միլիցիայի համապատասխան որգանին ներկայացնելու անձնագիր ստանալու համար, և այլ նպատակների համար գործադրվել չի կարող։

3.

1. Նշանատուրքը վճարվում է համապատասխան նշաններով (մարկա), վոր կպցրվում են հիմնական գրության վրա և մնում են քաղաքացիական կացության ակտերի ցուցակագրման գրքում։

2. Քաղաքացիներին տրված բոլոր քաղվածքների վրա նշան է արվում նշանատուրքը վճարված լինելուն մասին՝ մատնանշելով վերջինիս չափը։

Ծանոթություն.—Նշանատուրքից ազատված քաղվածքների վրա մակագրվում է, թե ինչ հիման վրա տվյալ քաղվածքը ազատվել է տուրքից. նման մակագրություն արվում է նաև Զագսի հիմնական գրքերում։

3. Քաղաքացիական կացության ակտերի գրքերից մասնավոր քաղաքացիներին տրված բոլոր քաղվածքներն ու տեղեկությունները գրասենյակային տուրքի չեն յենթարկվում։

4. Հիշյալ նշանատուրքը մտնում է գանձարանը, վորպես յեկամուտ և վոչ մի կերպ չի կարող անցնել տեղական միջոցներին։

5. Զագսի որգանների տված քաղվածքներն ու տեղեկությունները տեղական վոչ մի տուրքի յենթարկվել չեն կարող։

6. Բոլոր այն քաղվածքների և տեղեկությունների վրա, վոր Զագսը ուղարկում է իրեն ստորագրյալ կամ իրենից բարձր կանգնած Զագսի որգաններին, չպիտի անել վոչ մի մակագրություն ստացված նշանատուրքի կամ ազատված լինելու մասին, վորովհետև տվյալ մակագրությունը պետք է արվի Զագսի այն որգանի կողմից, վորի պահանջմամբ ստացվում է տվյալ քաղվածքը։

VII.

Առաջարկվում է հիշյալ հրահանգը կյանքի մեջ մտցնել վոչ ուշ քան 1925 թ. հունիս 1-ը, վորի մասին հայտնել Ներքին Գործոց Ժողկոմատին (Զագսի բաժանմունքին)։

Գյուղխորհուրդների նախագահների համար յեղած ընդհանուր դրությունը, վորի հիման վրա ծնունդների և մահացությունների սեագիր ցուցակագրությունն են կատարում—վերացվում է։

Ներքգործժողկոմի տեղակալ—**ԻՎ. ՍՎԻՐԻԴՈՎ**

Արդար. ժողկոմի տեղակալ—**Ս. ԳՍՐՈՒՉԵՆԿՈ**

Վարչական-Միլիցիական
Վարչության պետ—**ՉՍՄՉԱԳԻՆՍԿԻ**

Ձև № 1.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն արձանագրությունը կազմել է ԱՍԽՀ . . . . . գավառի . . . . . Ռայգործկոմի . . . . . Գյուղխորհուրդն առ այն, վոր քաղաքացի . . . . . հայտնել է . . . . . .
(Ազգանուն, անուն, հայրանուն) (Այս ինչ թվին, ծննդի կամ մահվան մասին)
. . . . . խախտելով ԱՍԽՀ Քրեական Որենսգրքի 96-րդ հոդվածը, այսինքն ուշացել է հակառակ Ներքգործժողկոմատի հրահանգի սահմանած 17 և 25 հոդվածների, Գյուղխորհուրդներում քաղաքացիական ակտերի ցուցակագրման կարգի մասին . . . . . որ ժամանակով։

Հայտնող քաղաքացու . . . . . անձնական հարցաքննությունից պարզվեց, վոր հայտնող . . . . . վորը . . . . . քաղաքացի է, ուշացրել է հայտնելու . . . . . հետևյալ պատճառներով . . . . . .
(Ազգանուն) (Ծննդի կամ մահվան մասին)
. . . . . .

Հայտնողի ստորագրությունը՝

Արձանագրություն կազմողի ստորագրությունը

Ձև № 2.

. . . . . գավառի . . . . . Ռայգործկոմի . . . . . Գյուղխորհուրդին։
Բնակ. . . . . .
. . . . . .

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամուսնանալու համար մեր կամավոր համաձայնությունը հայտնելով, խնդրում ենք այդ ցուցակագրել ընդունված կարգով։ Հայտնում ենք, վոր դանկանում ենք կրել . . . . . ազգանունը։ Այնպիսի պայմաններ, վոր կարող են արգելք լինել մեր ամուսնությանը,—նախատեսված ԱՍԽՀ Քաղաքացիական Որենսգրքի

1003/1960
12973-ս

«Ամուսնական Իրավունք» բաժնի 437—440 հոդվածներով, չկան։

Կեղծ ցուցումներ տալու դեպքում քրեական պատասխանատվության յենթարկվելու մասին նախազգուշացրված ենք։

Ստորագրություններ՝

«. . . » . . . . . 192 թիվ.

Քաղաքացի . . . . . .
իր անձնավորությունը հաստատելու համար ներկայացրել է . . .
. . . . . № . . . տրված . . . . . .
. . . . . « . . . » . . . . . 192 թվին։

Քաղաքացի . . . . . .
իր անձնավորությունը հաստատելու համար ներկայացրել է . . .
. . . . . № . . . . տրված . . . . . .
. . . . . « . . . » . . . . . 192 թվին։

Գյուղխորհրդի նախագահ՝

Ամուսնությունը ցուցակագրված է №

Գյուղխորհրդի նախագահ՝

Ամուսնության № . . . վկայականը
Ստացել եմ (ստորագրություն)

« . . . » . . . . . 192 թիվ.

Ձև № 3.

Գրվում է այն դեպքում, երբ ամուսնացողների անձնավորությունը և նրանց ընտանեկան դրությունը հաստատում են վկաները։

192 թվի № . . . . ամուսնության գործի վերաբերյալ.

Մենք ներքո ստորագրողներս հաստատում ենք . . . . . .
. . . . . .
. . . . . .

անձնավորությունները, նույնպես և նրանց ամուսնանալու խնդրու որինական արգելքների բացակայությունը։

Վոչ ճիշտ տեղեկություններ տալու մասին քրեական պատասխանատվության յենթարկվելու համար մեզ հայտնված է։

Ստորագրություններ՝

« . . . » . . . . . 192 թիվ.

Ստորագրված է իմ ներկայությամբ.

քաղ . . . . . .
բնակիչ . . . . . .
և ներկայացրել եմ . . . . . .
. . . . № . . . . . տրված է . . . . . .

« . . . » . . . . . 192 թիվ.

և քաղ . . . . . .
բնակիչ . . . . . .
և ներկայացրել եմ . . . . . .
. . . . № . . . . . տրված . . . . . .

« . . . » . . . . . 192 թիվ.

« . . . » . . . . . 192 թիվ.

Ձև № 4.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Քաղաքացիական կացության ակտերի—ծնունդների, մահացությունների և ամուսնությունների ցուցակագրման մասին 192 թ.
(այս ինչ)
. . . . . մասին . . . . . Ռայգործկոմի . . .
. . . . . Գյուղխորհրդի

Գյուղխորհրդի անունը	Կատարված է ցուցակագր.				Ամուսնություններ	Ընդամենը	Արված քաղվածքների քանակը	Ծանոթություն
	Ծնունդներ		Մահացութ.					
	Տղամ.	Կին	Տղամ.	Կին				
Դիկեսամանսկից (այս ինչ ռայոնի) Ղազախի գավառի	17	13	11	9	19	69	63	Կցվում է 69 հատ վիճակագրական քարտ

Ղազախի գավառի . . . . . Ռայգործկոմին։

Ներկայացվում է 69 հատ վիճակագրական քարտերի հետ միասին։

« . . . » . . . . . 192 թիվ № . . . .

Գյուղխորհրդի նախագահ՝

Քարտուղար՝

504

2013

21734

<< Ազգային գրադարան

NL0048550